Վավերագրական ֆիլմ Ադրբեջանի շահախարդախ գործի մասին

ԿՈՌՈՒՄՊԱՑՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Ադրբեջանի նախագահի ազդեցությունը հասնում է մինչև Գերմանիայի Բունդեսթագ: Հետքով գնում է ARD-ի վավերագրական ֆիլմը:

Բաքվի նս մեկ օգնական. Քրիստոնեա-դեմոկրատական միության (ՔԴՄ, գերմ. ՝ Christlich-Demokratische Union, CDU) հանգուցյալ պատգամավոր Կարին Շթրենց Լուսանկար ՝ SWR

Հասարակություն / Մեդիա

27. 6. 2021 թ.

ԲԱՐԲԱՐԱ ՕԵՐԹԵԼ

Արտասահմանի վարչության պետ

ԹԵՄԱՆԵՐ

Ադրբեջան

Կոռուպցիոն գործ

Հեռուստատեսային վավերագրական ֆիլմ

GNS

Երբ քաղաքական գործիչները, ինչպես Բունդեսթագի ՔԴՄ նախկին պատգամավորներ Նիկոլաս Լյոբելը և Մարկ Հաուպտմանը, անամոթաբար հարստանում են **կորոնայի պաշտպանիչ դիմակների** ապօրինի առևտրական գործարքներով, դա տհաճ է: Սակայն է՛լ ավելի անդուրեկան է, երբ նույն այդ պարոնայք (և ոչ միայն նրանք) ակնհայտորեն չեն կարողանում բավարարվել նաև խավիարից: Նշանակում է՝ իրենք իրենց դարձրել են լիովին կոռումպացված մի վարչակարգի պատրաստակամ գործակալ, որում **մարդու իրավունքների լուրջ խախտումներն** օրակարգ են:

Այսպիսի անասելի խճճվածքները Հարավային Կովկասի Ադրբեջանի Հանրապետության օրինակով լուսաբանում է «Ադրբեջանի կապը: Ալիևի վարչակարգի օգտակար օգնականները» վավերագրական ֆիլմը, որը ցուցադրեց ARD-ն այս երկուշաբթի:

Անտեղյակ անձանց համար գրեթե 30 րոպեանոց ռեպորտաժը, բարեբախտաբար, պատրաստ պահում է նաև երկրի աշխարհագրությանը, պատմությանը, մշակույթին և ինստիտուտներին վերաբերվող որոշ բացատրություններ: Մենք գիտենք, որ նախագահ Իլհամ Ալիևն իր քննադատների հետ շփվելիս ուղղակիորեն կոտրատվող չէ: Միևնույն ժամանակ, մարդը, որը 2003 թ. ի վեր ղեկավարում է նավթի ու գազի հանքավայրերով հարուստ պետությունը, ջանում է արտաքինից դրականորեն ներկայանալ:

Բացի խոշոր սպորտային իրադարձություններից, ինչպես այս տարվա ֆուտբոլի Եվրոպայի առաջնությունը (շնորհակալություն ՈՒԵՖԱ-ին) կամ 2015 թ. Եվրոպական խաղերը, այնտեղ հետամուտ են նաև արտասահմանցի՝ անպատկառ այլ ծառայություններ մատուցողների օգտագործմանը՝ քաղաքականությունից և բիզնեսից: Նրանց վարձը ցոփությամբ վճարում է Բաքուն՝ փոստային կասայից:

Միլիոնների պարգևավճարներ ՔԴՄ պատգամավորների համար

Գերմանիայում Ալիևը դարձել է եկամուտ բերող: Ըստորում, ՔԴՄ երկարամյա պատգամավոր և լոբբիստ Էդուարդ Լինտներն էլ է, կարծես, հատուկ արժանիքներ վաստակել Ադրբեջանի օգտին իր անխոնջ ծառայության համար: Հաճախակի նա աջակցում էր ընտրությունների «մասնավոր» դիտորդական առաքելությունների՝ դեպի Ադրբեջան ուղևորության կազմակերպմանը. Բաքուն ստանձնում էր համապարփակ անհոգ փաթեթի ծախսերը: Դրանց ներկայացուցիչները տալիս էին հաճոյախոս եզրակացություններ և տարօրինակ կերպով չէին կարողանում հայտնաբերել ժողովրդավարական չափանիշների որևէ խախտում մանիպուլացված քվեարկության ժամանակ:

Ասում են, որ Ադրբեջանի՝ դրական արդյունքի համար միլիոնների հասնող պարգևավճարների բաշխումը իրականացրել է Լինտները, ի միջի այլոց, իր «Գերմանա-ադրբեջանական ֆորում» լոբբիստական ասոցիացիայի միջոցով: Թե ում մոտ են հոսել այդ փողերը հարցի պարագայում Լինտները հիշողության զարմանալի պակաս է ցույց տալիս: Նա ասում է, որ չի կարող հիշել:

Դա նույն այն Լինտներն է, որը, որպես Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի անդամ, համարձակվում էր չարաշահել այս ինստիտուտը նույնպես իր անշնորհք ալիևամետ քարոզչության համար. ճիշտ այնպես, ինչպես անցյալ մարտին մահացած ՔԴՄ պատգամավոր Կարին Շթրենցը:

Նա նաև ոսկեզօծում էր ի նպաստ Բաքվի իր «օժանդակությունները» և, 2015 թ. գերմանացի միակ պատգամավորն էր, որ դեմ քվեարկեց Ադրբեջանում քաղբանտարկյալների ազատ արձակման բանաձևին: Եվրոպայի խորհուրդը, որում ներառված է նաև Ադրբեջանը, իրականում ժողովրդավարության և մարդու իրավունքների պահապանն է: Բայց դա չի անհանգստացնում Էդուարդ Լինտների նման մարդկանց: Նա հարցազրույց վերցնողին տեղեկացնում է, որ Ադրբեջանի հետ իր կապի մեջ ինքը ոչ մի անպատշաճ բան չի գտնում և գիտի իր անելիքը:

Հիասթափված աքսորյալները

Ի վերջո, ադրբեջանցի իրավապաշտպանները, որոնցից մի քանիսը վավերագրական ֆիլմում խոսելու հնարավորություն են ստացել, դա ընկալում են որպես ապտակ: «Մենք ցանկանում էինք այնպիսի Ադրբեջան, ինչպիսին Գերմանիան է: Բայց Ադրբեջանի կառավարությունը Գերմանիան դարձրել է Ադրբեջանի նման: Կոռումպացված, կոռումպացված քաղաքական գործիչներ», - ասում է Յաֆազ Հասանովը: Այժմ նա ապաստան է ստացել Գերմանիայում:

Նմանապես Էմին Հուսեյնովը, որը ապրում է Շվեյցարիայում, աքսորի մեջ, չի թաքցնում իր հիասթափությունը Գերմանիայից. «Նրանք գողացել են ապագայի մեր հույսերը, իսկ Գերմանիան ոչինչ չի արել», - ասում է նա:

Ոչ պակաս հիասթափեցնող, քան գերմանացի ծախու քաղաքական գործիչների պահվածքն ինքնին, դրա շատ ուշ հետևանքներն են: Էդուարդ Լինտներն ստացել է մուտքի արգելք Եվրոպայի խորհրդի շենք, իսկ կոռուպցիայի մեջ կասկածի պատճառով անցկացվել է քրեա-իրավական հետաքննություն: ՔԴՄ պատգամավոր Ակսել Է. Ֆիշերը՝ Բունդեսթագում ՔԴՄ-ի ներկայացուցիչն ու նաև Իլհամ Ալիևի լավ ընկերը, նկատողություն ստացավ և կորցրեց խորհրդարանական անձեռնմխելիությունը: Այնուամենայնիվ, նա դեռ շարունակում է տաքացնել պատգամավորական իր աթոռը: Որտեղից էլ միշտ գալիս է այս բարեկիրթ զսպվածությունը. պոտենցիալ դրամասեր նմանակող հանցագործներին դժվար թե դա կարողանա հետ պահել այդպիսի ամոթալի արարքից:

Հրապարակվել է https://taz.de/Doku-ueber-Aserbaidschan-Affaere/!5778976/ կայքում